

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ____________ /Լ.Հովհաննիսյան/

«31» օգոստոսի 2023 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Երևանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 138 հիմն.դպրոց**

---

**VIIա**

***Գևորգյան Մերի***

*դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը*

**2023-2024** ***ուստարի***

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| 1 | **Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը/** |
| | 7ա դասարանը 2023-2024 ուստարում ունի 24 աշակերտ,որից 11-ը աղջիկ են,13-ը՝ տղա:Դասարանը համերաշխ է,միասնական,յուրաքանչյուր հարց քննարկվում է դասարանով և փոխհամաձայնության զալով:Դասարանը ակտիվորեն մասնակցում է ներդպրոցական միջոցառումներին:Ունեն առաջադիմության գերազանց,լավ և միջին մակարդակ:Ընկերասեր են,պատրաստակամորեն կատարում են դասղեկի հանձնարարությունները: |
| 2 | **Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում** |
| | **2023-2024 ուստարում նախատեսվում են հետևյալ ուսումնադաստիարակչական աշխատանքները**<br>1. Ուշադրություն դարձնել հաճախելիությանը և ուսումնական պրոցեսին:<br>2. Հետևել կարգապահությանը դասասենյակում,դասապրոցեսին և դասամիջոցին:<br>3. Աշխատել ծնողների հետ՝ծնողկոմիտեի միջոցով:<br>4. Կազմակերպել հայրենասիրական ուղղվածությամբ էքսկուրսիաներ:<br>5. Ապահովել ուսումնական պրոցեսում բոլորի մասնակցությունը բաց դասերին:<br>6. Տարվեն աշխատանքներ դասարանում միասնականության բարձրացման համար :<br>7. Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների առաջադիմության բարձրացմանը և քննությունների նախապատրաստմանը:<br>8. Այցելություն արտադրամասեր:<br>9.Կատարել նախագծային աշխատանքներ տարբեր առարկաներից:<br>10.Մասնակցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կազմակերպած տարաբնույթ նախագծերին:<br>11.Դասեր վարել թանգարաններում<br>12.Հանդիպումներ կազմակերպել ժամանակակից գրողներից կամ գրականության դասագրքի համահեղինակներից մեկի հետ: |
| 3 | **Հոգևոր դաստիարակություն** |

| | |
|---|---|
| | Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը Ազգի պահպանման հիմքը հոգևոր դաստիարակությունն է: Օգնել ճիշտ գնահատել հոգևոր արժեքները: Օգտագործելով հայ եկեղեցու պատմությունը՝ որպես օրինակ,ցույց տալ,որ հոգևոր,նյութական արժեքները արժեզրկվում են հոգևոր ,նյութական արժեքները արժեզրկվում են հոգևոր բացակայությունից: Հեռու պահել աղանդավորներից: |
| **4** | **Գեղագիտական դաստիարակություն** |
| | Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: Երիտասարդության տարիներին գեղեցիկը տեսնելը և օբյեկտիվ գնահատելը ավելի անհրաժեշտ է դառնում:Պետք է հնարավորին չափ ծանոթ լինել արվեստի տարբեր ճյուղերին:Հաճախակի այցելել թանգարաններ,տեսարժան վայրեր,ցուցահանդեսներ: |
| **5** | **Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն** |
| | Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ֆիդայինների և հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Ազգի դարավոր պատմության մասին զրույցներով բարձրացնել ռազմա-հայրենասիրական ոգին:Անցկացնել զրույցներ տղաների հետ ,, Ես վաղվա զինվոր եմ ,, , աղջիկների հետ ,,Մենք ինչ կարող ենք անել հայրենիքը պաշտպանելու համար ,, թեմայով: |
| **6** | **Ֆիզիկական դաստիարակություն** |
| | Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում :Հետևել ֆիզկուլտուրայի դասերին պատշաճ ներկայանալուն՝ ,,Առողջ մարմնում առողջ հոգի,,: Կազմակերպել միջդպրոցական ,միջգյուղական և միջտարածքային մրցույթներ և սպորտլանդիաներ:Ուսուցչի կարևոր խնդիրն է հետաքրքրություն առաջացնել սպորտի նկատմամբ: |
| **7** | **Աշխատանքային դաստիարակություն** |
| | Հետևել բոլորի մասնակցությանը կազմակերպվող յուրաքանչյուր շաբաթօրյակին: Հետևել դասարանի մաքրությանը:Պահպանել գույքը, ակտիվ ակտիվ մասնակցել դպրոցին վերաբերվող բոլոր աշխատանքներին: Աշխատանքը համարել երեխայի կարևոր պահանջմունքներից մեկը: Խթանել աշխատանքային հմտությունները և կառուցողական վերաբերմունքը: |
| **8** | **Բնապահպանական դաստիարակություն** |
| | Առողջ ապրելակերպի առաջին նախապայմանը բնությունն է:Անցկացնել զրույցներ բնապահպանական թեմաներով:Գարնանր ակտիվորեն մասնակցել ծառատնկման աշխատանքներին:Մաքուր պահել շրջակա բնությունը: |
| **9** | **Դպրոց-ընթանիք կապը** |

| | |
|---|---|
| | Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:<br>Ծնող-դպրոց-դասղեկ համագործակցությունը ծնողի տեղեկացվածության գրավականն է:Ծնողներին ընդգրկել յուրաքանչյուր արտադպրոցական միջոցառումներին:Ամիսը մեկ անցկացնել ծնողական ժողովներ,ավելի հաճախ ծնող խորհրդի նիստեր:Օգտագործել և 'ծրագիրը,և ' համակարգիչը ծնող-դպրոց կապը ամրապնդելու համար: |
| **10** | **Իրավական դաստիարակություն** |
| | Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում*:* |

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Ակնկալիքների սանդղակ | 09 | դասղեկ,աշակ. |
| II | Վ.Համբարձումյանի 115-ամյակը | 09 | դասղեկ,աշակ. |
| III | Անկախության օր: Վերհիշել ՀՀ կազմավորմանը,պետական խորհրդանշաններին | 09 | դասղեկ,աշակ. |
| IV | Պատերազմը և իմ դպրոցի հերոսները | 09 | դասղեկ,աշակ. |
| V | Թարգմանչաց տոն | 10 | դասղեկ,աշակ. |
| VI | Իմ համայնքի հիմնախնդիրները | 10 | դասղեկ,աշակ. |
| VII | Կլիմայական փոփոխություններ. | 10 | դասղեկ,աշակ. |
| VIII | Նվազեցնենքածխածնի հետքը | 10 | դասղեկ,աշակ. |
| IX | Հիշենք՝ պլաստիկը, ապակին և թուղթը աղբ չեն | 11 | դասղեկ,աշակ. |
| X | Կրճատենք թափոնները | 11 | դասղեկ,աշակ. |
| XI | Խնայենք ջուրը | 11 | դասղեկ,աշակ. |
| XII | Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն | 11 | դասղեկ,աշակ. |
| XIII | Արտակարգ իրավիճակներ և անձի պաշտպանություն | 12 | դասղեկ,աշակ. |
| XIV | Պարույր Սևակի հետքերով | 12 | դասղեկ,աշակ. |
| XV | Սևակի դիմանկարը | 12 | դասղեկ,աշակ. |
| XVI | Ամանորի հրաշքը | 01 | դասղեկ,աշակ. |
| XVII | Պարույր Սևակ- 100 | 01 | դասղեկ,աշակ. |
| XVIII | Նրանք ապրում են մեր սրտերում | 01 | դասղեկ,աշակ. |
| XIX | Պոեզիան իմ կյանքում | 02 | դասղեկ,աշակ. |
| XX | Ընթերցանության շաբաթ. Պարույր Սևակ «Որդուս» | 02 | դասղեկ,աշակ. |
| XXI | «Խարույկ սառույցի վրա ֆիլմի դիտում, քննարկում» | 02 | դասղեկ,աշակ. |
| XXII | Արվեստն իմ հոգում | 02 | դասղեկ,աշակ. |
| XXIII | Մեդիագրագիտություն | 03 | դասղեկ,աշակ. |
| XXIV | Ճիշտ եւ կեղծ լուրեր | 03 | դասղեկ,աշակ. |
| XXV | Գույնի խորհուրդը | 03 | դասղեկ,աշակ. |
| XXVI | Այցելել պատկերասրահ | 03 | դասղեկ,աշակ. |
| XXVII | Մեկ ազգ, մեկ եկեղեցի | 04 | դասղեկ,աշակ. |
| XXVIII | Ուխտագնացություն | 04 | դասղեկ,աշակ. |
| XXIX | Եկեղեցական տոներ | 04 | դասղեկ,աշակ. |

| | | |
|---|---|---|
| XXX | Եղեռնազարկ իմ ժողովուրդ | 04 |
| XXXI | Իմ դպրոցի հերոսները | 05 |
| XXXII | Մայիսյան հերոսամարտեր | 05 |
| XXXIII | Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին | 05 |
| XXXIV | Ճանաչենք մեր երկիրը (էքսկուրսիայի նախապատրաստում) | 05 |